



**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը
«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի
նախագծի վերաբերյալ**

Բովանդակություն

Զինվորական ծառայության ժամկետը հաշվարկելու կարգի վերաբերյալ3

«Զինապարտ» եզրույթի հստակեցման վերաբերյալ 4

*Հիվանդությունների ցանկը ՀՀ կառավարությամբ որոշմամբ սահմանելու
վերաբերյալ 5*

*Կառավարության որոշմամբ զինվորական ծառայությունից ազատելու կամ
տարկետում տրամադրելու հիմքերի վերաբերյալ..... 6*

Նախագծի 27-րդ հոդվածի ընթացակարգային նորմերի վերաբերյալ..... 7



2017թ. օգոստոսի 9-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է դրվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Սույն փաստաթղթում ներկայացվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ դիրքորոշումը Նախագծով առաջարկվող մի քանի կարգավորումների վերաբերյալ՝ առաջարկությունների ամբողջական փաթեթը կներկայացվի ավելի ուշ:



Ձինվորական ծառայության ժամկետը հաշվարկելու կարգի վերաբերյալ

Նախագծի 7-րդ հոդվածը սահմանում է զինվորական ծառայության ժամկետների հաշվարկման կարգը, որի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում զինծառայողի՝ ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը: Նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում զինծառայողի սույն օրենքի խախտմամբ զինվորական ծառայություն անցած լինելու ժամանակահատվածը:

Նախագծի 7-րդ հոդվածի 2 մասի 2-րդ կետի նորմի կիրառման դեպքում այն զինծառայողը, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատական ակտ, խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է ՀՀ քրեական դատավարության 135-րդ հոդվածով նախատեսված խափանման միջոց կիրառելու հիմքերի բացակայության պատճառով, կարճվել է համապատասխան քրեական գործի վարույթը կամ նրա նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը, ստիպված է լինելու լրացնել ձերբակալման կամ կալանավորման ժամանակահատվածը:

Այսպիսով, հիմնվելով մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքից, տրամաբանական ենք համարում, որ Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում սահմանվեն զինվորական ծառայության ժամկետի հաշվարկման բացառություններ:

Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի ձևակերպումը կարող է հանդիսանալ հնարավոր տարրնկալման առիթ: Հետևաբար, իրավակարգավորումը հստակեցնելու և տարրնկալումը բացառելու նպատակով անհրաժեշտ է այն ենթարկել վերանայման և հստակեցման:

Այսպիսով, առարակում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը, բացառությամբ այն դեպքերի, երբ զինծառայողի նկատմամբ կայացվել է արդարացման դատական ակտ, խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, կարճվել է համապատասխան քրեական գործի վարույթը կամ նրա նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը»:



Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը վերանայել և հստակեցնել բովանդակությունը:

«Չինապարտ» եզրույթի հստակեցման վերաբերյալ

Նախագծում 17-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «զինապարտ» եզրույթը, որի իրավական բովանդակությունը Նախագծում սահմանված և պարզաբանված չէ, այդ իսկ պատճառով իրավական բաց է առաջանում զինապարտ հասկացության բնորոշման և օգտագործման մեջ:

Ի տարբերություն Նախագծի իրավական կարգավորումներին, գործող «Չինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը ամբողջությամբ սահմանում է «զինապարտություն» եզրույթը, որի համաձայն՝ զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:

Այսպես, զինապարտներ են համարվում նախագորակոչային, զորակոչային տարիքի և պահեստագործում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները:

Քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է՝

- զինվորական հաշվառումը.
- զինվորական ծառայության նախապատրաստությունը.
- զորակոչը և զինվորական ծառայությունը.
- պահեստագործում գտնվելը:

Գործող օրենքի 5-րդ հոդվածով սահմանված է, թե որ տարիքից է անձը համարվում զինապարտ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաձանոթ հասկացություններ կամ տերմիններ: Եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները:

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ անթույլատրելի է իրավական ակտում



օգտագործել հասկացություն՝ առանց դրա իրավական բովանդակության սահմանման:

Առաջարկում ենք

Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրել՝ սահմանելով «Զինապարտ» հասկացության բովանդակությունը:

Հիվանդությունների ցանկը ՀՀ կառավարությամբ որոշմամբ սահմանելու վերաբերյալ

Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը, հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում որոշվում է զինապարտի կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են զինապարտի կամ զինծառայողի առողջական վիճակին՝ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ներկայիս գործող իրավակարգավորման համաձայն՝ հիվանդությունների ցանկը սահմանվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մշտապես բարձրացրել է այն խնդիրը, որ հիվանդությունների ցանկը պետք է սահմանվի բացառապես օրենքով: Նախագծի առաջարկվող կարգավորումը, համաձայն որի, պետք է սահմանվի ՀՀ Կառավարության որոշմամբ, կարևոր տեղաշարժ է գործող իրավական նորմով՝ ՀՀ պաշտպանության նախարարի 410-ն հրամանից, սակայն այն վերստին չի համապատասխանում թե ազգային օրենսդրության և թե մարդու իրավունքների միջազգային սկզբունքներին:

Այսպես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը:

Մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերյալ հարցերը բացառապես օրենքով կարգավորելը կանխորոշվում է իրավական պետության այն հիմնարար սկզբունքով, ըստ որի՝ հիմնական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով կամ օրենքով սահմանված կարգով, իսկ մարդու պարտականությունները չեն կարող սահմանվել այլ կերպ, քան օրենքով:



Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք

- ✓ Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունը խմբագրել հետևյալ կերպ. «Զինապարտների և զինճառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են զինապարտի կամ զինճառայողի առողջական վիճակին՝ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»
- ✓ Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում որոշվում է զինապարտի կամ զինճառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար սահմանվում են առանձին ցանկով՝ համաձայն հավելված 2-ի»¹
- ✓ Նախագծում առանձին հավելվածով սահմանել հիվանդությունների ցանկը:

Կառավարության որոշմամբ զինվորական ծառայությունից ազատելու կամ տարկետում տրամադրելու հիմքերի վերաբերյալ

Նախագծի 21-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ նույն հոդվածում չնախատեսված այլ հիմքով քաղաքացին պարտադիր զինվորական ծառայությունից կարող է ազատվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե քաղաքացին չունի սույն հոդվածի 1-ին մասում սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմք:

Նշված հոդվածներով սահմանված դեպքերում ՀՀ կառավարությանը վերապահվել է հայեցողական լիազորություն պարտադիր զինվորական ծառայությունից անձին ազատելու կամ տարկետում տրամադրելու հարցում, մինչդեռ

¹ Կարծում ենք տեխնիկական տեսանկյունից Նախագծի 32-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված հավելված 1-ը կարող է փոխարինվել հավելված 2-ով, իսկ հիվանդությունների ցանկը սահմանել հավելված 1-ով



որևէ կերպ սահմանված չեն այն հիմքերը կամ դեպքերը, երբ ՀՀ կառավարությունը նման որոշումներ կայացնելու իրավասություն կունենա:

Նախագծի սույն հոդվածների նորմերը պարունակում են խտրականության արգելման սկզբունքի խախտման վտանգի առկայություն, ուստի անհրաժեշտ է հստակեցնել սույն նորմերի բովանդակությունը, հստակեցնել այն չափորոշիչները, որոնց հիման վրա ՀՀ կառավարությունը պետք է ընդունի որոշում:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք

Հստակեցնել նախագծի 21-րդ հոդվածի 5-րդ և 22-րդ հոդվածի 3-րդ մասերը, սահմանել կառավարության լիազորության իրականացման հիմքերի շրջանակը և չափանիշները:

Նախագծի 27-րդ հոդվածի ընթացակարգային նորմերի վերաբերյալ

Նախագծի համակարգային վերլուծությունից հետևում է, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու վերաբերյալ որոշումը կայացվում է տեղական զորակոչային հանձնաժողովի կողմից, որևէ այլ մարմին նման որոշում կայացնելու լիազորություն չունի²:

Նախագծի 27-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դրանով սահմանվում են ոչ միայն զորակոչն ապահովող մարմինների ցանկը, այլ նաև յուրաքանչյուրի լիազորությունը, ընդ որում՝ դրանում առկա են որոշակի ընթացակարգային նորմեր պարունակող դրույթներ:

Ներկայիս գործող օրենսդրական կարգավորման վերաբերյալ առավելապես բարձրացվող խնդիրներից են զորակոչի ընթացքում պատշաճ վարչարարության իրականացման մեխանիզմների բացակայությունը, դրանց անհստակությունը:

Հոդվածի ամբողջական վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Նախագծի ընդունումից հետո շարունակվելու են արդի մնալ գործնականում հանդիպող խնդիրներն ու հարցերը:

Այսպիսով, պարզաբանված չեն հետևյալ հարցադրումները՝ թե ո՞ւմ կողմից է հարուցվում վարչական վարույթը և ո՞ր փուլում է ավարտվում այն, ո՞ր ակտն է հանդիսանում վերջնական վարչական ակտ, ո՞ր ակտն է ենթակա բողոքարկման, ի՞նչ հիմնավորմամբ է նշվել, որ կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումները ենթակա են բողոքարկման առանձին կարգով, արդյո՞ք բժշկական հանձնաժողովի եզրակացությունները հանդիսանում են անձի համար իրավական

² Տե՛ս 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը:



հետևանք առաջացնող փաստաթուղթ, արդյո՞ք եզրակացությունը պետք է բողոքարկվի վարչական ակտի հետ մեկտեղ, թե առանձին, եթե եզրակացությունը չի բողոքարկվել զինակոչիկի կողմից, սակայն հետագայում բողոքարկվում է զինվորական ծառայության գորակոչելու վերաբերյալ որոշումը, արդյո՞ք այդ փուլում կարող է քննարկվել եզրակացության իրավաչափությունը և այլ համանման իրավական վեճի առարկա հանդիսացող խնդիրներ և հարցեր, որոնք կարող են լուրջ խոչընդոտ հանդիսանալ զինակոչիկի՝ բողոքարկման իրավունքը իրացնելու փուլում:

Գտնում ենք, որ այս խնդիրները կարող են լուծվել, եթե յուրաքանչյուր որոշումից հետո պարզաբանվի, թե արդյոք այն կարող է բողոքարկվել, եթե այո, ապա որ մարմնին, որ որոշումներն են հանդիսանում միջանկյալ ակտեր, որն է վարչական վարույթն ավարտող վերջնական վարչական ակտը, ինչպես նաև բողոքարկման ենթակա որոշումները զինակոչիկին հանձնելու կարգը, ժամկետները: Ինչպես նաև՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է այդ որոշումների հանձնելու հետ մեկտեղ սահմանել, որ զինակոչիկին պետք է հանձնվի գրավոր ծանուցում՝ վարչական ակտի բողոքարկման կարգի, ժամկետների և բողոք քննելու իրավասություն ունեցող մարմնի վերաբերյալ:

Հատկանշական է այն դրույթը, որով որոշման օրինակը զինակոչիկին հանձնելու վերաբերյալ առանձին նորմ է սահմանվել միայն հանրապետական հանձնաժողովի կողմից կայացվող որոշումների մասով, ստացվում է, որ օրինակ՝ անձին զինվորական ծառայության գորակոչելու վերաբերյալ որոշումը զինակոչիկին հանձնելու պարտականություն տեղական հանձնաժողովը չունի՝ ինչը ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ և 50-րդ հոդվածներին:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք

Նախագծի 27-րդ հոդվածում հստակեցնել յուրաքանչյուր որոշման բողոքարկման ընթացակարգը, այդ թվում որոշման օրինակը, ինչպես նաև որոշման բողոքարկման կարգի և ժամկետների վերաբերյալ հուշաթերթիկ տրամադրելու պարտականության վերաբերյալ:

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի կազմակերպումը պետք է իրականացվի պաշտպանության նախարարության և զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայություն չունեցող, քաղաքացիական ծառայություն հանդիսացող պետական գործակալության կողմից:

Առաջարկում ենք նախագծում զինվորական կոմիսարիատի փոխարեն նշված գործողության համար պատասխանատու մարմնի՝ զինվորական կոմիսարիատի



*փոխարեն սահմանել զորակոչի կազմակերպման պետական գործակալություն
անվանումը՝ մասնավորապես Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասում:*